

---

ՄԱԳԴԱ ՋԱՆՓՈՒԼԱԴՅԱՆ. «Մասունցի Դավթի» ռուսական կյանքը, Երևան, «Հեղինակային» հրատ., 2015, 174 էջ:

2016 թ. նախաշեմին հայերեն լեզվով ընթերցողի սեղանին դրվեց մեր ազգային մշակույթի միջազգային արժևորման, հետևաբար և տարածման համար կարևոր մի աշխատություն՝ Մագդա Ջանփոլադյանի «Մասունցի Դավթի» ռուսական կյանքը՝ մենագրությունը, որը 2012 թ. լույս էր տեսել ռուսերեն:



Նկատենք, Մ. Ջանփոլադյանի առաջին ուսումնասիրությունը՝ «Թումանյանը և ժողովրդական էպոսը» (1969), լուրջ ավանդ է թումանյանագիտության ասպարեզում: Մենագրության մեջ վերլուծվել են «Մասունցի Դավթի» թումանյանական մշակումը, Թումանյանի թարգմանությունները ռուսական և սերբական էպոսներից ու բանաստեղծի հոդվածները ժողովրդական էպոսի մասին: Այդ արժեքավոր, հիմնարար աշխատությամբ հեղինակը վստահորեն մուտք գործեց թե՛ թումանյանագիտության, թե՛ էպոսագիտության և թե՛

թարգմանական արվեստի խնդիրների ոլորտ ու տասնամյակներ շարունակ մշտապես հավատարիմ մնաց գրականագիտության մեջ իր նախընտրած ուղուն և թեմաներին: Մեկ անգամ չէ, որ Մ. Ջանփոլադյանը հայ և ռուսալեզու ընթերցողին է ներկայացրել հայ-ռուս գրական կապերի պատմության ուշագրավ և ամենավառ էջերը:

«Մասունցի Դավթի» ռուսական կյանքը՝ ուսումնասիրությունն ընդգրկում է հայ ազգային էպոսի ռուսերեն թարգմանությունների և «Մասունցի Դավթի» մասին գիտական հրատարակություններում, պարբերական մամուլում տեղ գտած, ռուս քննադատական ու գիտական արձագանքների քննությունը՝ շուրջ մեկդարյա կտրվածքով՝ XIX դ. 80-ական թվականներից մինչև անցյալ դարի 80-ականները: Նման ուսումնասիրություն կատարվում է առաջին անգամ: Մեկ առ մեկ բացահայտելով մեր դյուցազներգության ընկալման առանձնահատկությունները՝ հեղինակը հայ ընթերցողի առջև պատկերում է մեր էպոսի «ռուսական կյանքը»: Գրականագետը նշում է. «Գեղարվեստական բարձրարժեք երկի թարգմանության շնորհիվ հարստանում է ոչ միայն այն ժողովրդի գրականությունը, որի լեզվով կատարվել է թարգմանությունը: Հարստանում է նաև «նվիրող» գրականությունը. օտարալեզու ընթերցողի ընկալումն ու գնահատականները կարող են ազգային երկի մեջ բացել ինչ-որ նոր շերտեր, նոր կողմեր, որոնք մինչ այդ աննկատ էին մնացել» (էջ 3):

Միանգամայն հասկանալի է, որ ինչպես էպոս թարգմանելը, այնպես էլ այդ թարգմանությունները ըստ արժանվույն գնահատելը բարդագույն և չափազանց պատասխանատու խնդիր է:

Մ. Ջանփոլադյանի ընտրած նյութը ինքնին բարձրացնում է գրքի արժեքը, քանզի վերաբերում է «մեզ համար հավերժական, անմահ ստեղծագործությանը» (էջ 3), սակայն այն առավել նշանակալից է, քանի որ արձարծում է բանագետներին, թարգմանիչներին հուզող արդի խնդիրներ: Արժանին մատուցելով նախորդներին, հեղինակը չի շրջանցել այն բոլոր աշխատանքերը (Հովհ. Թումայնյան, Հ. Օրբելի, Հ. Ղանալանյան, Մ. Հարությունյան, Լ. Մկրտչյան, Ա. Ջաքարյան և այլք), որոնք իրենց ներդրումն ունեն նշված թեմայի լուսաբանման մեջ:

Մենագրության կարևոր արժանիքներից մեկը նրանում ընդգրկված հարուստ, կոնկրետ նյութի գիտական իմաստավորումն է: Գրականագետն իր դիտարկումներում դրսևորել է բազմակողմանի մոտեցում: Վերլուծություններն արվել են թարգմանությունների և քննադատական արձագանքների ժամանակի, «Սասունցի Դավթի» վերաբերյալ արդի գիտաքննադատական մտքի մակարդակի, թարգմանության տեսության ժամանակակից խնդիրների հաշվառումով, ինչը հնարավորություն է ընձեռել ներկայացնելու դարաշրջանի ազդեցությունը թարգմանությունների և քննադատության բնույթի, բովանդակության և որակի վրա: Հայ ազգային էպոսի մասին ռուսալեզու գիտական ու գրաքննադատական արձագանքների քննությունը կատարելիս հեղինակն անդրադառնում է ռուս ընթերցողի համար առանձնացված էպոսի այլ պատումներից բերված դրվագների, որոնք բացի համահավաք տեքստից իրենց նշանակությունն են ունեցել ռուս քննադատների համար մեր էպոսի մոտիվները նորովի իմաստավորելու և գնահատելու գործում: Խոսքը վերաբերում է հատկապես Մ. Հարությունյանի և Ա. Սահակյանի գրի առած պատումին, որն այսօր ավելի քան արդիական է, քանի որ ընդգծում է, որ էպոսում դատապարտվում են այն սասունցիները, ովքեր դժվար ժամանակներում հեռանում են հայրենիքից և հաստատվում օտարության մեջ («Սասունա մարդ իրավունք չունի էրթա, ուրիշ տեղ տուն շինի», էջ 170):

Մ. Ջանփոլադյանն իր ուսումնասիրության մեջ վեր է հանում հայ դյուցազներգության նորանոր շերտեր, նոր կողմեր, որոնք հայ էպոսագիտության համար մինչ օրս աննկատ են մնացել: Օտարազգի ընթերցողի, մասնավորապես, մասնագետ ընթերցողի, գրողի ու մշակութային գործչի գնահատականները նպաստում են ազգային ստեղծագործության միջազգայնացմանը և դրանով իսկ վերահաստատում են մեր էպոսի համամարդկային արժեքը: Վ. Ռոզովը, դիտարկելով մեր ազգային էպոսը համաշխարհային պոեզիայի համատեքստում, գրում է. «Եթե հայ ժողովուրդը իր ոգու թանկարժեք հանքերից կարողանար ներկայացնել միայն այդ ստեղծագործությունը, ապա այդ դեպքում էլ նրա համար ապահովված կլիներ ամենահարգարժան տեղերից մեկը համաշխարհային մշակույթի պանթեոնում» (էջ 167): Վ. Իվանովի խոսքերով՝ հայկա-

կան էպոսը «պայծառ, ամուր, աննկարագրելի ուժեղ աշխարհ տանող կախարդական դուռ է» (էջ 53), «արտասովոր, զարմանալի երևույթ» (էջ 104): Ի. Ռոզանովի հոդվածում իր գեղարվեստական կատարելությամբ «Սասունցի Դավիթը» հռչակվում է համաշխարհային ժողովրդական էպոսի լավագույն նմուշներից մեկը» (էջ 56): Վ. Դերժավինը էպոսը բնորոշում է «բանաստեղծական անօրինակ կոթող», որը դասում է աշխարհի մեծագույն ժողովրդական էպոսների շարքում (էջ 66): Իսկ ահա Ս. Շերվինսկին ոչ թե հավասարի իրավունք է տալիս, այլ ավելի բարձր է դասում «Սասունցի Դավիթը»: Նրա համոզմամբ հայկական էպոսի՝ դրամատիկական բախումներով հագեցվածությունը զուգորդումներ է առաջացնում Շեքսպիրի ստեղծագործության հետ: «Կարող ենք վստահ ասել, – գրում է Շերվինսկին, – որ «Սասունցի Դավիթը» հայ ժողովրդի և՛ Հոմերոսն է, և՛ Շեքսպիրը» (էջ 56): Ոչ միայն թարգմանիչ, այլև արվեստի պատմաբան Շերվինսկին մեր էպոսի հանդեպ «ուղղակի հիացմունք» է դրսևորում (էջ 77). նրա բնորոշմամբ մեր ազգային էպոսը ժողովրդական բարոյականության օրենսգիրք է (էջ 159): Թարգմանչի խոստովանությամբ նրան «գրավեց հենց պատումի ձևը՝ այնքան հարուստ տեսարաններով, որ Աստվածաշնչին ու Շեքսպիրին են արժանի... Ակնհայտ դարձավ, որ այդ էպոսը ոչ միայն աշխարհի փառապանծ էպոսների շարքում է, այլև գերազանցում է և՛ Ռոլանդի երգին, և՛ Նիբելունգներին, և նույնի՛սկ Հոմերոսին իր բարոյական կողմով» (էջ 159):

Ս. Ջանփոյադյանը մեկ առ մեկ անդրադառնում է հայկական էպոսի՝ գիտական իմաստավորման տեսանկյունից եղած ինչպես կարևոր ու արժեքավոր դիտարկումներին, այնպես էլ հետազայում չհաստատված մտքերին ու վարկածներին: Առաջին անգամ խորհրդային երկրի վիթխարի տարածքի վրա ռուսալեզու գրական միջավայրում խոսվեց հայկական էպոսի համաշխարհային նշանակության մասին: Ռուս քննադատները վկայեցին մեր էպոսի հումանիստական ոգու, թշնամու հանդեպ կույր, ազգայնական աստեղության, ազգային բացառիկության և անհանդուրժողականության բացակայության մասին: Ի. Ռոզանովը մի շատ կարևոր օրինաչափություն է նկատել՝ հայ դյուցազունների վարած պատերազմները միշտ պաշտպանողական, ազատագրական բնույթ են կրում (էջ 46):

Ռուսական գրաքննադատական հրապարակումների հեղինակները բացահայտում են հայկական էպոսի ամենից կարևոր մոտիվները՝ նրա բովանդակային բարձր արժեքը, և ընդգծում են «հայ ժողովրդի մեծահոգությունը և մարդասիրությունը» (էջ 50):

Ուշագրավ են նաև գրքում բերված Ա. Դենի խոսքերն առ այն, որ էպոսը «բացում է մեր առջև հումանիզմի իսկական հանրագիտարան՝ իր բոլոր դրսևորումներով» (էջ 50): Ըստ Ս. Լիպկինի՝ «Հայերի էպոսում կա բառային հրաշք, ինչպես գեղարվեստական հրաշք կա Հայաստանի օդում, լեռներում և հովիտներում» (էջ 164):

Մի ամբողջ գլուխ է հատկացված 1950–1980-ական թվականներին ռուս գրական, գրաքննադատական և գիտական հրատարակություններում զետեղված «Սասունցի

Դավթի» թարգմանությունների մեկնությանը: Այստեղ առանձին ենթագլխով ներկայացվում և արժևորվում է Ն. Ջարյանի «Մասնա Դավիթ» վիպակի Ն. Լյուբիմովի բարձրարվեստ թարգմանությունը:

Բերելով ռուս քննադատության մեջ արտահայտված խորը, ինքնատիպ, նուրբ դիտարկումներն ու դատողությունները՝ մեր էպոսին հատուկ մոտիվների, ժողովրդի բարոյական իդեալների, հերոսների, էպոսի գեղարվեստական առանձնահատկությունների և կատարելության մասին, մենագրության հեղինակն իր այս ուսումնասիրությամբ հավաստում է, որ դրանք զգալիորեն հարստացրել են հայ էպոսագիտությունը: Հեղինակը փաստում է նաև, որ մեր էպոսը դարձել է ռուս ընթերցողի սիրելի երկերից մեկը. Բ. Դրաչի վկայությամբ՝ «մաշված, շատ կարդալուց ու ձեռքից ձեռք անցնելուց քրքրված» գիրք (էջ 104):

Մ. Ջանփոլադյանն ընդգծում է հատկապես այն, որ «Մասունցի Դավիթը» ռուս քննադատության մեջ գնահատվել է համաշխարհային ժողովրդական-էպիկական մշակույթի համատեքստում, իսկ մեր էպոսի թարգմանիչները կրթված, ստեղծագործական հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող մարդիկ էին:

Այս արժեքավոր գիրքը նաև ընթերցման հաճույք է պատճառում. ընդ որում՝ ոչ միայն բանասիրական լիակատար իրացումներով, այլև շարադրանքի պարզությամբ, հստակ, առանց որևէ ավելորդ բառի ու արտահայտության, սեղմ ու անսերունջ գիտական ոճի գրավչությամբ:

Մ. Ջանփոլադյանի արժարժած խնդիրները վերաբերում են ոչ միայն մեր էպոսի թարգմանություններին, այլև առհասարակ թարգմանական բարդագույն արվեստի խնդիրներին: Այս բնույթի ուսումնասիրություններն ապահովում են հայ թարգմանության տեսության, հայ գրականության ելքը դեպի համաշխարհային գրական կյանք: Աշխատությունը լուրջ ձեռքբերում է ինչպես հայ գրականագիտության, այնպես էլ ռուս և առհասարակ ցանկացած ազգի մշակույթի՝ թարգմանության ոլորտին առնչվող յուրաքանչյուր գրողի ու գրականագետի համար:

Աշխատության հայերեն հրատարակությունը լրացնում է նաև հայ գրականագիտության բաց էջերը, քանզի նմանատիպ աշխատությունները սովորաբար հրատարակվում են այլ լեզուներով, մինչդեռ հայ ընթերցողը ևս զգում է դրանց կարիքը:

Ամփոփելով մեր խոսքը՝ նշենք. Մ. Ջանփոլադյանի «Մասունցի Դավթի» ռուսական կյանքը» աշխատությունը հայ մշակույթին մատուցած հեղինակի մեծագույն ծառայությունն է և արժանի է ամենաբարձր գնահատականի:

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ